ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Քնարիկ Եդիգարյան, Միջազգային համագործակցության վարչության Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժնի ավագ մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2023թ. մայիսի 8-ից մայիսի 19-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Գործուղման նպատակն էր «Խոցելիության ախտորոշում» թեմայով դասընթացին մասնակցությունը, տնտեսության ոլորտում պետությանը սպառնող արտաքին, ներքին և ֆինանսական ռիսկերի գնահատման վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը:

5. **Քննարկված թեմաները՝**

   - Խոցելիություն և ճգնաժամեր: Թեմայի ուսումնասիրության ընացքում նկարագրվել է, թե ինչպես կարող է երկրի խոցելիությունը հանգեցնել տնտեսական շոկերի և ճգնաժամերի, ուսումնասիրվել են ֆիսկալ, արտաքին հատվածի և ֆինանսական ռիսկերի հիմնական և երկրորդային աղբյուրները,

Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից՝ ռիսկերի կառավարմանը միտված գործիքակազմը, վերոնշյալ ճգնաժամերի ուղիղ և միջնորդավորված կապերը:

- Խոցելիության վարժանք: Թեմայի շրջանակներն ընդգրկել են ռիսկերի առաջին և երկրերդ սերնդի գնահատման գործքիներ, էքստերնալ ռիսկերի գնահատման logit մոդելներ, տնտեսական խոցելիության մոդելավորում, ոչ ճգնաժամային և ճգնաժամային կանխատեսումներ դասական մոդելավորման և մեքենայական ուսուցման միջոցով:
- Ֆիսկալ խոցելոիություն: Թեման առնչվում է պետության մակրոտնտեսական ցուցանիշներին՝ հարկաբյուջետային քաղաքականությանը, ինֆլյացիային, տնտեսական աճին, պետական պարտքի կառավարմանը փակ և բաց տնտեսություններում, պետական պարտքի կայունության գնահատման չափանիշներին, պետական պարտքի դինամիկայի տարբեր ուղղվածություններին: Նեկայացվել են ԱՄՀ կողմից մշակված գործիքներ, որոնք օգնում են բացահայտել վերոնշյալ ցուցանիշների միջև առկա կապերը՝ նպաստելով տնտեսական ճգնաժամերի կանխմանը:
- Ֆինանսական խոցելիություն: կատարվել է ֆինանսական ռիսկերի դասակարգում, առանձնահատուկ անրադարձ է կատարվել ֆինանսական էնդոգեն ռիսկերին, ուսումնասիրվել են ֆինանսական ռիսկերը բանկային և ընդհանուր համակարգային առումով, քննարկվել է կապը ֆինանսական և ոչ ֆինանսական կառույցների միջև տնտեսական խոցելիության համատեքստում:
- Արտաքին հատվածի խոցելիություն: Արտաքին հատվծի խոցելիությունը գնահատվել է արտաքին ֆինանսական հարաբերությունների, արտաքին պետական պարտքի, արտահանամն և ներմուծման ցուցանիշների, վճարային հաշվեկշռի դեֆիցիտի կամ պրոֆիցիտի և արժութային ռիսկերի գնահատման միջոցով: Ուսումնասիրվել են պատմական ճգնաժամեր և ելնելով պատմական թվային շարքերից՝ գնահատվել են հնարավոր ապագա ռիսկերը:

- Ռիսկերի կանխատեսման և գնահատման մեթոդներ: Ներկայացվել է ռիսկերի կանխատեսան համար կիրառվող 3 մեթոդներ՝ ROC վերլուծություն, logit մոդել, «պոչային վտանգ»-ի կիրառում: Յուրաքանչյուր մեթոդի համար կատարվել է գործնական աշխատանք Eviews ծրագրային փաթեթի միջոցով, ներմուծվել են PVAR, VAR և ռեգրեսիոն մոդելներ: Յուրաքանչյուր մասանկցի հնարավորություն է տրվել իրականացնել է ինքնուրույն հաշվարկ բոլոր 3 մոդելներով, այնուհետեև իրականացվե է արդյունքների համեմատություն և վերլուծություն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցեը**:

   Մասնակիցների կողմից կատարվել և առանձին ներկայացվել է մի քանի երկրների տնտեսական խոցելիության վերաբերյալ հետազոտություն և ռիսկեի գնահատում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**:

   Դասընթացի ընթացքում որոշման ընդունում կամ փաստաթղթերի ստորագրում նախատեսված չէր:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

   Հաշվի առնելով միջազգային համագործակցության վարչության գործառույթները, որոնք ուղիղ առնչվում են միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի և այլ փաստաթղթերի կնքմանը, տնտեսկան ինտեգրացիաներին, վարկերի և այլ փոխառությունների, ինչպես նաև դրամաշներհների ներգրավմանը, ոլորտային բանակցությունների իրականացմանը, որոնք կարող են առաջացնել որոշակի տնտեսական հետևանքներ (օրինակ արժութային ռիսկեր, պետական պարտքի ավելացում,

ֆինանսական պարտավորություններ)՝ դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները օգտակար կլինեն աշխատանքի ընթացքում:

9. **Ստորագրություն, ամսաթիվ:**

23.05.2023թ.